


ԴԱՍ 8

ՄԵՐ ՄԱՐՄԻՆԸ



Մեր մարմինը ունի գլխաւոր երեք մասեր.—
Գլուխ, իրան և անդամներ:

Գլխուն մէջ կը գտնուի ուղեղը։ Գլխուն վրայ կը գտնուի մեր զլխաւոր զգայարանները։

Գլուխը իրանին միացած է վիզին միջոցաւ。 Վիզը կը կոչուի նաև պարանոց։ Իրանին վերի մասը կը կոչենի կուրծք, իսկ վարի մասը՝ փոք կամ որովայն։ Որովայնին մէջ կը գտնուին լեարդը եւ աղիքները։ Իրանին ետեւի մասը կոնակն է։ Իրանին մէջ կը գտնուի ստամոքսը։ ան թերթին միացած է որկոր կոչուած խողովակով։ Բերթէն կը մեկնի նաև ուրիշ խողովակ մը եւ կը հասնի քոֆերուն, ասիկա խոչափողն է։

Սիրտը կը գտնուի կուրծքին մէջ, երկու քոֆերուն միջեւ։

Մարդկային մարմինը ունի չորս անդամներ, — երկու թեւ եւ երկու սրունի։


Ամէն մէկ անդամ երեք բաժիններէ բաղկացած է։ Այսպէս՝ թեւը ունի երեք մասեր։ — բազուկը՝ ուսէն մինչեւ արմուկ, նախաքազուկը՝ արմուկէն մինչեւ դաստակ, եւ վերջապէս ձեռքը՝ որ կը կրէ հինգ մատներ։ Զեռքի մէջի մասը ափ կը կոչենի։

Սրունին ալ կը բաղկանայ երեք մասերէ։ — զիստը՝ իրանէն մինչեւ ծունկ, ծունկէն մինչեւ կրունկ՝ քո՛ւն սրունի, եւ վերջապէս ոտքը՝ որ մեր մարմինին ամբողջ ծանրութիւնը կը կրէ։ Ոտքն ալ ձեռքին նման հինգ մատներ ունի։ Ոտքին տակի մասը ներքան կը կոչուի։

Անդամներուն շնորհիւ է որ կրնան շարժիլ, քալել կամ որեւէ առարկայ քոնել։

Ամբողջացն'ւր.

Այս երկու պատկերներուն մէջ, քիչ երուն հետեւ ելով, զրէ՛ մարմնի մասերուն անունները:



ՈՍԿՈՐՆԵՐԸ ԵՒ ՄԿԱՆՆԵՐԸ




ՈՍԿՈՐՆԵՐԸ

Մեր մարմինը կը պարունակէ մեծ թիւով ոսկորներ։ Բազմաքիւ ոսկորներ իրարու միացած են յօդերու միջոցով։

Ոսկորներու ամբողջութիւնը կմախք կը կոչուի։ Կմախքը մեր մարմինին ձեւ կու տայ եւ զայն ուղիղ կը պահէ. նաեւ կը պաշտպանէ մեր ներքին զործարանները։

ՄԿԱՆՆԵՐԸ

Ոսկորներուն փակած են մկանները։ Մկաններն են, որ շարժում կը ստեղծեն։ Մկանները պատուած են մորքով։




Ներկէ՝

- Յօդը
- Մկանը
- Ոսկորը

ՄԱՐՄՆԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ Կ'ԱՇԽԱՏԻՆ ԱՌԱՆՑ ԴԱԴԱՐԻ

ՇՆՋԱՌՈՒԹԻՒՆԻ:

Առանց շնջելու չենք կրնար ապրիլ, որովհետեւ մեր քոլոր գործարանները տեւաբար օդի պէտք ունին: Օդը կ'երթայ մեր քոֆերուն մէջ, ու կը լուծուի արեան հետ:




ՄԱՐՍՈՂՈՒԹԻՒՆԻ:

Բերնի մէջ պատառները կը կտրտուին ու կը մանրուին: Յետոյ որկորին մէջէն անցնելով

կ'իջնեն ստամփս: Ստամփսին մէջ կերակուրները ժանի մը ժամ կը մնան եւ հեղուկներու հետ շաղուելով կ'անցնին աղիքին մէջ: Աղիքներուն մէջ մարսողութիւնը վերջնական կ'ըլլայ: Մեր կերածները սնունդի կը վերածուին:



Արիւնը սնունդը կը տանի մարմնին բոլոր կողմերը: Ուտելիքներուն անսնունդ մասերն ու մնացորդները մարմինէն կ'արտաքսուին:



ԱՐԵԱՆ ՇՐՋԱԳԱՅՈՒԹԻՒՆԸ.

Արիւնը կարմիր գոյնով հեղուկ մըն է: Մեր մարմնին մէջ ամէն կողմ արիւն կայ: Արիւնը կը հոսի խողովակներու մէջէն այդ խողովակները երակ կը կոչուին: Արեան կեդրոնը սիրտն է:

Երբ մեր ձեռքը դնենք մեր կուրծքին ձախ կողմը թերեւ զարկեր կը զգանք: Ամէն անգամ, որ սիրտը զարնէ անիկա կը կծկուի եւ կը մղէ արիւնը, որպէսզ տարածուի ամբողջ մարմնին մէջ: Սիրտը արիւնով շարունակ կը լեցուի եւ կը պարպուի:



ԶՂԱՅԻՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Ուղեղը եւ ողնածուծը մարմնին բոլոր մասերուն միացած են բարակ թելերու միջոցաւ: Այդ թելերը մեր ջիղերն են: Զիղերն են, որ ուղեղին լուր կու տան մեր տեսածներուն եւ զգացածներուն մասին. անոնք նոյնապէս ուղեղին հրահանգները կը հասցնեն մկաններուն:

Ամբողջացնուր.

1—


2—

3—

4—

5—

6—



1.- Ես արիւնը կը մղեմ
մարմնի բոլոր մա-
սերուն:
ի՞նչ եմ ես:

3.- Օդը, զոր կը շնչես,
ինձի կու զայ:
ի՞նչ եմ ես:

2.- Երբ ճաշ ուտես,
խողովակի մը մի-
ջոցով կերածդ ինձի
կը հասնի:
ի՞նչ եմ ես:

4.- Փակած եմ ոսկոր-
ներուդ. ինձմով է,
որ անոնք կրնան
շարժիլ:
ի՞նչ եմ ես:

Ամբողջացո՞ւր.

1.- Մեր մարմնիը ունի գլխաւոր երեք մասեր.—
.....,,

2.- Մեր մարմնի գործարանները կ'աշ-
խատին առանց դադարի: Այդ մասերն են.

.....,,
.....,